# ”ՄԵԼԻՈՐԱՑԻԱ” ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

378834 Արարատի մարզ, գ.Հայանիստ, Հեռ. (374 10) 27-38-06, Էլ.փոստ՝ vova-tadevosyan@mail.ru

16.04.14 № 74-ՎՌ ի պատասխան Ձեր ______________ №______________

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/22>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/22>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Մելիորացիա>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություններ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՀՀ ՏԿՆ-ՋՏՊԿ-Մ-ՇՀԾՁԲ-11/22-2/14>>: Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, գ. Հայանիստ, ՓԲԸ-ի շենք, թիվ 4 սենյակ, մինչև 2014թ. ապրիլի 29-ը, ժամը $11^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Խ. Վարդանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Մելիորացիա>> ՓԲԸ-ի շենքում, թիվ 4 սենյակում, Արարատի մարզ, գ. Հայանիստ հասցեում, 2014թ. ապրիլի 29-ին, ժամը $11^{00}$-ին: Գնային առաջարկը երկու կամ ավելի արժույթներով ներկայացնելու դեպքում դրանք կհամեմատվեն հայտերի բացման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

Գնման առարկա է հանդիսանում <<Մելիորացիա>> ՓԲԸ-ի կարիքների համար՝ տրանսպորտային փոխադրման ծառայությունների ձեռքբերումը:

<<Մելիորացիա>> ՓԲԸ-ի կարիքների համար՝ տրանսպորտային փոխադրման ծառայությունների մատուցման (որոնք կազմված են՝ 7 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

*Մասնակիցները կարող են հայտը ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես բոլոր չափաբաժինների համար: Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:*

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/22 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Մելիորացիա>> ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեն է /vova-tadevosyan@mail.ru/:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

ՏՆՕՐԵՆ Վ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ